ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2013թ. նոյեմբերի 7 **թիվ 118-Ա**

ԹԱԼԻՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ 1987-1995ԹԹ. ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ, ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 17-րդ հոդվածների պահանջներով Թալինի զորակոչային տեղամասում 2013 թվականի ձմեռային զորակոչը կազմակերպված անցկացնելու նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1. Թալինի տարածքային զինվորական կոմիսարին՝
1) 2013 թվականի նոյեմբեր- 2014 թվականի հունվար ամիսներին սկսել 1987-1995թթ. ծնված քաղաքացիների զորակոչի բժշկական հանձնաժողովի աշխատանքները և անցկացնել 1987-1995թթ. ծնված քաղաքացիների զորակոչը,
2) զորակոչել արական սեռի այն զորակոչիկներին, որոնց 18 տարին լրանում է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնց պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նախկինում տրված տարկետումը դադարում է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
2. Հաստատել՝
1) զորակոչային հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի,
2) զորակոչիկների բժշկական ստուգումներն անցկացնող հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:
3) զորակոչիկների ընտանեկան, գույքային և նյութական ապրելակերպի պայմաններին ծանոթանալու համար ստեղծված հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի.
ա. հանձնաժողովի կողմից կազմված ակտերը ներկայացնել Արագածոտնի մարզային զորակոչային հանձնաժողովի հաստատմանը:
3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝
1) ապահովել բժշկական հանձնաժողովի բոլոր անդամների պարտադիր ներկայությունը զորակոչային հանձնաժողովի աշխատանքներին,

2) բժշկական ստուգման և զորակոչի օրերին զորակոչային և բժշկական հանձնաժողովի անդամներին ազատել իրենց աշխատանքային պարտականություններից:

4. <<Թալինի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրենին՝

1) կազմակերպված անցկացնել զորակոչի ենթակա բոլոր զորակոչիկների ֆլյուորոգրաֆիան, արյան խմբի որոշումը և ՄՈՊ-ը,

2) ժամանակին կազմակերպել այն զորակոչիկների բուժումը, որոնք զորակոչային հանձնաժողովի կողմից ուղարկվել են բուժման,

3) հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ գույքով, հատուկ բժշկական սարքավորումներով, դեղորայքով,

4) զինկոմիսարիատի հայտով հատկացնել մեկ սանիտարական մեքենա՝ զորակոչիներին Հանրապետական հավաքակայան տեղափոխելու համար:

5. Առաջարկում եմ Թալինի տարածաշրջանի համայնքների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին՝

1) օժանդակել զորակոչիկների ժամանակին և պարտադիր ներկայությունը զինկոմիսարիատ՝ համաձայն զինկոմիսարիատի ներկայացրած չվացուցակի և անհատական ծանուցագրերի:

6. Բոլոր համայնքների ղեկավարներին՝ զորակոչից առաջ զինկոմիսարիատի հետ միասին մանրամասն ճշտել զորակոչիկների տվյալները:

7. Հանձնարարել Թալինի ոստիկանության բաժնին՝

1) ապահովել հասարակական կարգի պահպանումը զորակոչի տեղամասում,

2) զինկոմիսարիատից ստացված տվյալների հիման վրա կազմակերպել այն անձանց որոնումները, որոնք խուսափում են ներկայանալ զորակոչային տեղամաս:

8. Սույն կարգադրության կատարման պատասխանատվությունը դնել Թալինի զինվորական կոմիսար Տ.Հայրապետյանի վրա:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2013թ. նոյեմբերի 7-ի
Թիվ 118-Ա կարգադրության

ԿԱԶՄ

Թալինի տարածքային զինվորական կոմիսարիատի ձմեռային զորակոչային հանձնաժողովի

Տ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ	- Թալինի տարածքային զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ	- ՀՀՈ Արագածոտնի ՄՎ Թալինի բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ
Հ.ԱԹԱՆԵՍՅԱՆ	- Թալինի քաղաքապետի տեղակալ
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ	- ավագ բժիշկ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ	- հանձնաժողովի քարտուղար

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2013թ. նոյեմբերի 7-ի
թիվ 118-Ա կարգադրության

ԿԱԶՄ

Թալինի տարածքային զինվորական կոմիսարիատի ձմեռային զորակոչային բժշկական հանձնաժողովի

Տ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ	- Թալինի տարածքային զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ	- սրտաբան, ավագ բժիշկ
Ս.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	– թերապևտ
Կ.ՓԱՓԱՋՅԱՆ	- վիրաբույժ
Լ.ՍԵԽԼԵՅԱՆ	- ակնաբույժ
Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ	- մաշկաբան
Գ.ՎԱՐԴԱՆՅԱՆ	- քիթ-կոկորդ-ականջ
Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ	- նյարդաբան
Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ	- բուժքույր

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2013թ. նոյեմբերի 7-ի
թիվ 118-Ա կարգադրության

ԿԱԶՄ

Զորակոչիկների ընտանեկան, գույքային և նյութական ապրելակերպի պայմաններին ծանոթանալու համար ստեղծված հանձնաժողովի

Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ	-	Թալինի զինկոմիսարիատի զորակոչային բաժանմունքի պետ կապիտան
Հ.ԱԹԱՆԵՍՅԱՆ	-	Թալինի քաղաքապետի տեղակալ
համայնքապետեր	-	ըստ բնակավայրերի /համաձայնությամբ/

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ